

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-1-4-Ա

ք. Երևան

08.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի փետրվարի 8-ի նիստում քննարկեց 2023 թվականի նոյեմբերի 27-ին ներկայացուցիչ Շուշանիկ Թադևոսյանի կողմից ներկայացված «Այթիսեքյուրիթի» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Երևան 0010, Մ. Նալբանդյան 5, հարկ 2, տարածք 25, AM) «ITSEC YOUR IT GUARD» (№20230469) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 3-րդ ենթակետի, 4-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար և բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ նշանի գերիշխող մաս կազմող «ITSEC» (It security (<https://www.cisco.com/c/en/us/products/security/what-is-it-security.html>) և/կամ Information technology security evaluation criteria) գրառումն, որը սպառողների կողմից ընկալվելու է որպես առևտրային անվանում, հանդիսանում է թե՛ նկարագրական բնույթի նիշ և թե՛ որոշակի գործունեության հետ կապված համընդհանուր օգտագործման տերմին, որը «YOUR IT GUARD» արտահայտության հետ միասին մատնանշում է ինչպես ծառայության տեսակը, այնպես էլ գործունեության այն բնագավառը, որին վերաբերում է հայտարկվող նշանը: «ITSEC»-ը հապավում է, որն օգտագործվում է բազմաթիվ սուբյեկտների կողմից

նշելու համար իրենց մատուցվող ծառայության տեսակը (տես՝ <https://itsec.group/>, https://www.crest-approved.org/member_companies/itsec-services-asia-pte-ltd/, <https://www.itsec.asia/>, <https://it-sec.ca/>): Կարգի 102-րդ, 104-րդ կետերի համաձայն, եթե ապրանքային նշանի բոլոր տարրերով արտահայտված հավաքական իմաստը չպահպանվող տարրի իմաստից բացի այլ իմաստ չի արտահայտում, այսինքն՝ սպառողին այլ իմաստ, միտք չի հաղորդում, քան հաղորդում է տվյալ ոչ պահպանունակ տարրը և այդ պատճառով սպառողի մեջ այլ պատկերացում (ասոցիացիա) չի առաջանում, ապա համարվում է, որ տվյալ չպահպանվող տարրն ապրանքային նշանի գերիշխող մաս է կազմում: Եթե չպահպանվող տարրը կազմում է ապրանքային նշանի գերիշխող մասը, ապա եզրակացություն է արվում տվյալ նշանը որպես ապրանքային նշան գրանցելու անհնարինության մասին և որոշում է ընդունվում նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 3-րդ ենթակետի, 4-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար և բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ նշանի գերիշխող մաս կազմող «ITSEC» (It security (<https://www.cisco.com/c/en/us/products/security/what-is-it-security.html>) և/կամ Information technology security evaluation criteria) գրառումն, որը սպառողների կողմից ընկալվելու է որպես առևտրային անվանում, հանդիսանում է թե՛ նկարագրական բնույթի նիշ և թե՛ որոշակի գործունեության հետ կապված համընդհանուր օգտագործման տերմին, որը «YOUR IT GUARD» արտահայտության հետ միասին մատնանշում է ինչպես ծառայության տեսակը, այնպես էլ գործունեության այն բնագավառը, որին վերաբերում է հայտարկվող նշանը: «ITSEC»-ը հապավում է, որն օգտագործվում է բազմաթիվ սուբյեկտների կողմից նշելու համար իրենց մատուցվող ծառայության տեսակը:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն:

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Շուշանիկ Թադևոսյանի կողմից ներկայացված «Այթիսեքյուրիթի» ՍՊԸ ընկերության «ITSEC YOUR IT GUARD» (No20230469) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ